Արձանագրություն N 2
ՋԿ-ՀԲՄԽԾՁԲ-23/3-Շ ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի բացման նիստի

10 նոյեմբերի 2023թ.

ք. Երևան
Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Խ. Ծառուկյանը
Հանձնաժողովի անդամներ Ա. Սիմոնյանը, Ս. Ասրյանը, Ն. Ավետյանը, Մ. Վարդանյանը և Մ. Բաբայանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար խորհրդատվական ծառայություններ - Արգիճիի, Աստղաձորի, Ելփինի, Քասախի, Լիճքի ջրամբարների կառուցման նախագծերի շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման (շմագ) և սոցիալական ազդեցության գնահատում ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ՀԲՄԽԾՁԲ-23/3-Շ ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2023 թվականի հոկտեմբերի 23-ին, ժամը 16:00-ին /հրապարակումը՝ 11.10.2023թ./:

ՋԿ-ՀԲՄԽԾՁԲ-23/3-Շ ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
ՋԻՆՋ ՍՊԸ	ք. Երևան, 0037, Չոլակյան փող. տ. 38, հեռ. (+37410) 24-60-23; (+37410) 29-76-29	info@jinjconsult.com
Քոնսեկոարդ ՍՊԸ	ք. Երևան, Սեբաստիա 31/2 հեռ. 098586635	vtevosyan@gmail.com

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՇՄԱԳ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - Գեղարքունիքի մարզում Արգիճիի ջրամբարի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման խորհրդատվական ծառայություն գնման ընդհանուր գին 12 000 000				
1				
Չափաբաժին 2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՇՄԱԳ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - Գեղարքունիքի մարզում Աստղաձորի ջրամբարի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման խորհրդատվական ծառայություն գնման ընդհանուր գին 8 000 000				
1	Քոնսեկոարդ ՍՊԸ	7 200 000		7 200 000

Չափաբաժին 3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՇՄԱԳ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - Վայոց Ձորի մարզում Ելփինի ջրամբարի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման խորհրդատվական ծառայություն գնման ընդհանուր գին 8 000 000				
1	ՋԻՆՋ ՍՊԸ	6 650 000	1 330 000	7 980 000
2	Քոնսեկոարդ ՍՊԸ	7 200 000		7 200 000
Չափաբաժին 4 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՇՄԱԳ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - Սյունիքի մարզում Լիճքի ջրամբարի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման խորհրդատվական ծառայություն գնման ընդհանուր գին 12 000 000				
1	ՋԻՆՋ ՍՊԸ	9 550 000	1 910 000	11 460 000
2	Քոնսեկոարդ ՍՊԸ	11 400 000		11 400 000
Չափաբաժին 5 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՇՄԱԳ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ -Արմավիրի մարզում Քասախի ջրամբարի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման խորհրդատվական ծառայություն գնման ընդհանուր գին 10 000 000				
1	ՋԻՆՋ ՍՊԸ	7 700 000	1 540 000	9 240 000
2	Քոնսեկոարդ ՍՊԸ	9 400 000		9 400 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և յուրաքանչյուր հայտի փաստաթղթերի համապատասխանությունը հրավերի պահանջներին

06.11.2023թ.

ՋԿ-ՀԲՄԽԾՁԲ-23/3-Շ ծածկագրով ընթացակարգի
Մասնակից <<ՋԻՆՋ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում

1. Հայտատուն որպես <<Հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 5 տարիների ընթացքում ջրային ռեսուրսներին առնչվող առնվազն 1 ծրագրի ՇՄՍԱԳ հաշվետվության մշակման կամ նմանատիպ աշխատանքների որևէ փուլում ներգրավվածության փորձառություն, միջազգային դոնոր կազմակերպությունների ուղեցույցների իմացություն և այդ ուղեցույցների համապատասխան պատրաստված առնվազն 1 ՇՄՍԱԳ հաշվետվություն>> ներկայացրել է 2021թ-ին Երևանյան լճի վրա կառուցվող, լողացող արևային ֆոտովոլտայինկայանի ՇՄՍԱԳ հաշվետվության պատրաստումը, որի պատվիրատուն եղել է <<Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը>>: Հայտատուն չի ներկայացրել, թե որ միջազգային դոնոր կազմակերպության ուղեցույցներով է պատրաստվել ՇՄՍԱԳ-ը: Խնդրում ենք ներկայացնել հավաստի տեղեկատվություն (տեխնիկական առաջադրանք, որևէ հաստատում կամ այլ փաստաթուղթ), որը կփաստի թե՞ որ միջազգային դոնորի ուղեցույցմներն են օգտագործվել:

2. Հայտատուի կողմից ներկայացված իրականացվելիք աշխատանքների ժամանակացույցը չի արտացոլում <<Առաջադրանքի պայմաններով>> նախատեսված բոլոր առաջադրանքները, այլ միայն ներկայացնում է ՇՄԱԳ փորձաքննության հետ կապված քայլերը: Հարկավոր է ներկայացնել ավելի մանրակրկիտ՝ հաշվի առնելով առաջադրանքի պայմաններում նշված ՎՋԵԲ բանկի հետ կապված գործընթացները, օրինակ ՏԱ կետ 2.2:

3. Հայտատուն չի ներկայացրել (Հավելված 1,4) ըստ մասնագետների իրենց գործառույթները առաջադրանքի կատարման ոլորտում (գնահատման աղյուսակի կետ 2.2-ով պահանջվում է, որ մեթոդոլոգիան

պետք է արտացոլի մասնագետների համալիր գործողությունները՝ սահմանելով դրանց նպատակներն ու պարտականությունները):

Մասնակից <<Քոնսեկոարդ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում

1. Հայտատուն ներկայացրել է <<Հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 5 տարիների ընթացքում ջրային ռեսուրսներին առնչվող առնվազն 1 ծրագրի ՇՄՍԱԳ հաշվետվության մշակման կամ նմանատիպ աշխատանքների որևէ փուլում ներգրավվածության փորձառություն, միջազգային դոնոր կազմակերպությունների ուղեցույցների իմացություն և այդ ուղեցույցների համապատասխան պատրաստված առնվազն 1 ՇՄՍԱԳ հաշվետվություն>>, սակայն Հայտատուն չի ներկայացրել, թե որ միջազգային դոնոր կազմակերպության ուղեցույցներով է պատրաստվել ՇՄՍԱԳ-ը: Խնդրում ենք ներկայացնել հավաստի տեղեկատվություն (տեխնիկական առաջադրանք, որևէ հաստատում կամ այլ փաստաթուղթ), որը կփաստի թե՞ որ միջազգային դոնորի ուղեցույցմներն են օգտագործվել:

2. Հայտատուի կողմից ներկայացված իրականացվելիք աշխատանքների ժամանակացույցը (Հավելված 1,4) չի արտացոլում <<Առաջադրանքի պայմաններով>> նախատեսված բոլոր առաջադրանքները, այլ միայն ներկայացնում է ՇՄԱԳ փորձաքննության հետ կապված քայլերը: Հարկավոր է ներկայացնել ավելի մանրակրկիտ՝ հաշվի առնելով առաջադրանքի պայմաններում նշված ՎՋԵԲ բանկի հետ կապված գործընթացները, օրինակ ՏԱ կետ 2.2:

Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Հանձնաժողովի որոշում.

Համաձայն <<ՋԿ-ՀԲՄԽԾՁԲ-23/3-Շ>> ծածկագրով ընթացակարգի 8.9 կետի՝ հանձնաժողովը 06.11.2023թ. մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը և մասնակիցներին առաջարկում մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 07.11.2023թ. շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացրել է մասնակիցներին:

Սահմանված ժամկետում մասնակիցները /07.11.2023թ./ ներկայացրել են շտկված փաստաթղթերը, որը սահմանված կարգով տրամադրվել է գնահատող հանձնաժողովին:

10.11.2023թ. հանձնաժողովի հրավիրված նիստի ընթացքում քննարկվեց Ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերը:

Հանձնաժողովի որոշումը

Հանձնաժողովը որոշեց ամփոփել գնահատման արդյունքները.

1. Հաստատել <<Քոնսեկոարդ>> և <<ՋԻՆՋ>> ՍՊԸ-ի գնահատման արդյունքները.

Խորհրդատու(ներ)	գնային առաջարկների տրվող միավորներ	Տեխնիկական առաջարկի միջին գնահատական	Մասնակցին տրվող գնահատականը (տեխնիկական և ֆինանսական)
<<Քոնսեկոարդ>> ՍՊԸ			
Չափաբաժին 2	100	93.83	**95.7**
Չափաբաժին 3	92.4	93.83	**93.4**
Չափաբաժին 4	83.8	93.83	**90.8**

Չափաբաժին 5	81.9	93.83	**90.3**
<<ՋԻՆՋ>> ՍՊԸ			
Չափաբաժին 3	100	85.87	**90.1**
Չափաբաժին 4	100	85.87	**90.1**
Չափաբաժին 5	100	85.87	**90.1**

2. Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել) ՋԿ-ԲՄԽԾՁԲ-23/3-Շ ծածկագրով ընթացակարգի Չափաբաժին 1-ը հայտարարել չկայացած և հրապարակել հայտարարություն:

3. ՋԿ-ՀԲՄԽԾՁԲ-23/3-Շ ծածկագրով ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ Չափաբաժիների մասով ընտրված մասնակից հայտարարել <<Քոնսեկոարդ>> ՍՊԸ-ին և հրապարակել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը:

4. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, նիստերի դահլիճ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-6, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ _____ Խ. Ծառուկյան

անդամներ _____ Ա. Սիմոնյան

_____ Ս. Ասրյան

_____ Ն. Ավետյան

_____ Մ. Վարդանյան

_____ Մ. Բաբայան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան